ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՎԻՃԱԿԱԳՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

"22" 12 2017թ. № 12-3-926-2225

Ձեր "____" _____20 թ. № ____

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ
ՊԱՐՈՆ Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Ստեփանյան

Համաձայն "Ստեփան Մնացականյանի Ռուսաստանի Դաշնություն գործուղման ծախսերի մասին" Հայաստանի Հանրապետության Վարչապետի 11.12.2017թ. N 1448-Ա որոշման 2-րդ կետի սույնին կից Ձեզ է ներկայացվում ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ Ս. Մնացականյանի հաշվետվությունը 2017 թ. դեկտեմբերի 20-ին Մոսկվայում կայացած Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ-պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ:

Առդիր՝ 3 թերթ:

Հարգանքով

Նախագահ Ս. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

Կատարող՝ միջազգային վիճակագրական համագործակցության բաժին հեռ. 011-58 95 45

Հ.Հ. ... 057-48438 25.12.2017

ք. Երևան, 0010
Հանրապետության պող., Կառավարական տուն 3
☎: (37411) 52-42-13, Ֆաքս: (37411) 52-19-21
Էլ. փոստ: info@armstat.am
http:// www. armstat.am

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ Ս. Մնացականյանի հաշվետվությունը Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ-պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների աշխատանքային հանդիպմանը մասնակցության վերաբերյալ

- **Գործուղված անձինք**

ՀՀ ազգային վիճակագրական ծառայության նախագահ՝ Ս. Մնացականյան

- **Երկիր/քաղաք/ ժամկետ**

Ռուսաստանի Դաշնություն / Մոսկվա/ 20.12.2017 թ.

- **Նպատակը**

Եվրասիական Տնտեսական Հանձնաժողովի կողմից կազմակերպված Եվրասիական տնտեսական միության և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի անդամ-պետությունների ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների աշխատանքային հանդիպում

- **Քննարկված թեմաները**

Աշխատանքային հանդիպմանը ներկայացվեցին և քննարկվեցին հետևյալ թեմաները.

1. Վճարային հաշվեկշռի հայելային վիճակագրության համադրման համար սկզբնական վիճակագրական տվյալների փոխանակման վերաբերյալ ազգային (կենտրոնական) բանկերի և Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների վիճակագրական ծառայությունների առաջարկությունների մասին (ազգային (կենտրոնական) բանկերի ներկայացուցիչների ներգրավմամբ):
2. Հետևյալ հարցերի շուրջ Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարների հետ աշխատանքային հանդիպումների արդյունքում հրահանգների կատարման ընթացքի մասին՝
   - ԵԱՏՄ անդամ-պետություններում 2008թ. Ազգային հաշիվների համակարգի ներդրում
   - ԵԱՏՄ-ում միջազգային վիճակագրական դասակարգիչների ներդրում
   - ԵԱՏՄ անդամ-պետություններում 2020թ. փուլի ազգային մարդահամարների անցկացման նախապատրաստում

- ԵԱՏՄ անդամ-պետություններում նոր ստանդարտների ներդրում, որոնք ընդունվել են Աշխատանքի վիճակագիրների 19-րդ միջազգային կոնֆերանսի ժամանակ
- ԵԱՏՄ անդամ-պետությունների վիճակագրական պրակտիկայում կայուն զարգացման ոլորտում նպատակներին հասնելու ցուցանիշների ներդրում:

3. Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2017թ. հունվարի 16-ի №3 առաջարկության իրականացման մոտեցումների վերաբերյալ «2020թ. փուլի ազգային մարդահամարների անցկացման ընթացքում Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների հարցաթերթերում աշխատանքային գործունեության և միգրացիայի հարցերի վերաբերյալ մոդելային բլոկի ներառման մասին» (ազգային վիճակագրական ծառայության ղեկավարների տեղեկատվություն):
4. Եվրասիական տնտեսական միության անդամ-պետությունների կողմից նոր ստանդարտների կիրառման մասին տարածաշրջանային զեկույցի պատրաստման վերաբերյալ, որոնք ընդունվել են Աշխատանքի վիճակագիրների 19-րդ միջազգային կոնֆերանսի ժամանակ (ԵԱՏՄ ղեկավարող մարմինների հաջորդական իրազեկմամբ):
5. Եվրասիական տնտեսական միության անդամ-պետություններում թվային տնտեսության վիճակագրական դիտարկման մասին:
6. Ապրանքների արտաքին և փոխադարձ առևտրի վիճակագրության մեթոդաբանության վերանայման մասին:

- **Արդյունքները**

Մասնակցությունը աշխատանքային հանդիպմանը հնարավորություն ընձեռեց ազգային վիճակագրական ծառայությունների ղեկավարներին՝ ծանոթանալու Եվրասիական Տնտեսական Միության ազգային վիճակագրական ծառայությունների վերջին զարգացումներին, կիսելու իրենց խնդիրներն ու փորձերը, ինչպես նաև քննարկելու մեթոդաբանական հարցեր և գործողություններն ուղղված ազգային վիճակագրական համակարգերի հետագա կատարելագործմանը:

Օրկարգի առաջին թեմայի վերաբերյալ ՀՀ ԱՎԾ դիրքորոշումը սկզբունքային էր: ՀՀ ԱՎԾ-ն դեմ էր միության անդամ-պետությունների լիազոր մարմինների միջև անվանական բնույթի վիճակագրական տվյալների փոխանակումը ձևակերպմամբ ՌԴ Կենտրոնական բանկի առաջարկին: ՀՀ ԱՎԾ-ն առաջարկեց հետևյալ ձևակերպումը՝ "հայելային" վիճակագրության նպատակով Կենտրոնական բանկերի միջև իրականացնել միայն արտաքին առևտրի ցուցանիշների փոխանակում:

- **Նշումներ**

Այցելության ծախսերը ֆինանսավորվել էին Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

ՀՀ ազգային վիճակագրական
ծառայության նախագահ

Ս. Մնացականյան